# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

11.01.2023 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «23» ___02___ 2024թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ ՍՊԸ» - «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիումն, ի դեմս «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Արամյանի, ովը գործում է «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 11.01.2023թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակի «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 267 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

1.2 Պայմանագրով հաստատված Հավելված 2-ով ներկայացված «Օրացուցային գրաֆիկ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը» սյունակի «Ավարտը» ենթասյունակի «Աշխատանքաների սկզբից 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 267 օրացուցային օրվա ընթացքում» բառերով, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում կնքված Համաձայնագիր 2-ում Հավելված 2-ով ներկայացված «Օրացուցային գրաֆիկ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը» սյունակի «Ավարտը» ենթասյունակի « Աշխատանքաների սկզբից 175 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 192 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարան | «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ – «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիում |
| ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 | ՀՀ, Արարատի մարզ, ք.Արտաշատ, Շահումյան 36Ա |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 220013335280000 |
| Հ/Հ 900332239426, 900332001610 | «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ «Արարատ» մ/ճ |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 04242551 |
| Համայնքի ղեկավար՝ ____________ Վ. Խաչատրյան /ստորագրություն/ Կ.Տ. | Տնօրեն՝ ____________ Տ. Արամյան /ստորագրություն/ Կ.Տ |